ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
АЙГЕКСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

«03» 05 2012թ. N 62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77^1-րդ հոդվածի 4-ին մասի՝ Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի ղեկավարի կողմից ապրիլ ամսվա ընթացքում ընդունված որոշումները և արձակած կարգադրությունը:

Առդիր՝ 4 թերթ:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 4162-12
«03» 05 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
հեռ. 0231-6-57-60

ՈՐՈՇՈՒՄ

«12» ապրիլի 2012 թվականի N 5-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի ԹԻՎ 3Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի փետրվարի 6-ի N03-Ն հրամանով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, 5-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2012 թվականի մարտի 23-ի թիվ 01/10/898-12 գրությունը՝ *որոշում եմ.*

1 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ-3Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) «գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմ» բառերը փոխարինել «գյուղապետարանի աշխատակազմ» բառերով:
   2) Որոշման NN 1, 2, 3, 4 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2012 թվականի ապրիլի 12
գ. Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
հեռ. 0231-6-57-60

ՈՐՈՇՈՒՄ

«18» ապրիլի 2012 թվականի N 6

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԱՄԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1328-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ սույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և հիմք ընդունելով քաղաքացի Հովհաննես Արամի Սաֆարյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի Երևանյան խճուղի 1-ին փակուղի տուն 1 հասցեում գտնվող՝ մինչև 15.05.2001 թվականին կառուցված բնակելի տունը և դրան կից բնակելի նշանակության օժանդակ շինությունները, դրանց կառուցման և սպասարկման համար առկա սահմանազատված օրինական հողամասը 0,025958հա՝ համարել քաղաքացի Հովհաննես Արամի Սաֆարյանի սեփականությունը, որպես սեփական գույքի տիրապետողի:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանում՝ գրանցելու Հովհաննես Արամի Սաֆարյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի ու շենք-շինությունների նկատմամբ և տրամադրելու անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2012 թվականի ապրիլի 18

գ. Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

ՈՐՈՇՈՒՄ

«19» ապրիլի 2012 թվականի N 7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի ԹԻՎ 8 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, 5-րդ մասով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով, *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի ղեկավարի 2009 թվականի մայիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատանքային ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ-8 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) «գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմ» բառերը փոխարինել «գյուղապետարանի աշխատակազմ» բառերով:
   2) Որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2012 թվականի ապրիլի 19
գ. Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«26» ապրիլի 2012 թվականի N 2

ՄԱՐԶԻՉ ՀՈՒՍԻԿ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասով, 159-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով անձնական դիմումը՝ *կարգադրում եմ.*

2. 2012 թվականի մայիսի 2-ից մարզիչ Հուսիկ Արիստակեսյանին տրամադրել ամենամյա արձակուրդ 2011 թվականի փետրվարի 1-ից մինչև 2012 թվականի փետրվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար, ընդամենը՝ 24 աշխատանքային օր:
   Համարել աշխատանքի մեջ 2012 թվականի հունիսի 1-ից:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2012 թվականի ապրիլի 26
գ. Այգեկ